ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 510910, 8686

Ֆաքս՝(374 10) 538904

E-mail: bank@aeb.am

Էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվություն թիվ 6, 12 մայիսի 2023թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) և արտոնյալ բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)

արժեթղթերի քանակը՝ սովորական բաժնետոմս՝ 10,008,550 արտոնյալ բաժնետոմս՝ 424,600

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ սովորական բաժնետոմս՝ 2,080 ՀՀ դրամ արտոնյալ բաժնետոմս՝ 15,000 ՀՀ դրամ

I. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհուրդը 11.05.2023թ.-ին կայացած խորհրդի նիստում որոշում է կայացրել Բանկի բաժնետերերի տարեկան ժողովը անցկացնել ս.թ. հունիսի 09-ին, ժամը 12:00-ին, «Ալբերտ հոլ» դահլիճում (ք. Երևան, Նար-Դոսի 2)՝ ժողովի մասնակիցների գրանցումը կատարելով ժ. 11:30-ից մինչև ժ. 12:00:

Ժողովը կանցկացվի հետևյալ օրակարգով.

1. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
2. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության հաշվետվությունը 2022թ. տարեկան գործունեության մասին:
3. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ 2022թ. տարեկան արդյունքներով շահաբաժիններ վճարելու մասին:
4. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ 2022թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթի բաշխման համամասնությունների մասին:
5. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ աուդիտն իրականացնող անձի հաստատման մասին:
6. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի ընտրության մասին:

II. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 14/13-11.05.23թ. որոշմամբ նախատեսվում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության 6.22 ժզ կետով Խորհրդին տրված իրավասության համաձայն՝ իրականացնել կանոնադրական կապիտալի համալրում 945,455,680 ՀՀ դրամ գումարի չափով:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 14/14-11.05.23թ. որոշմամբ նախատեսվում է թողարկել 454,546 հատ սովորական բաժնետոմս՝ 2,080 ՀՀ դրամ անվանական արժեքով, տեղաբաշխել դրանք յուրաքանչյուրը 4,400 ՀՀ դրամ գնով: Տեղաբաշխվող բաժնետոմսերի ընդհանուր գումարային ծավալը (հաշվարկված մեկ բաժնետոմսը 2,080 ՀՀ դրամ անվանական արժեքով) կազմում է 945,455,680 ՀՀ դրամ, (մեկ բաժնետոմսը 4,400 ՀՀ դրամ շուկայական գնով հաշվարկած՝ 2,000,002,400 ՀՀ դրամ), որն ամբողջությամբ ենթակա է բաժանորդագրության:

Բաժնետոմսերի տեղաբաշխման սկիզբ համարել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից Ազդագրի գրանցման օրվան հաջորդող 45-րդ օրվա ժամը 09:00-ն, իսկ ավարտ՝ 31.10.23թ.-ի ժամը 16:00-ն: Մինչև նշված ժամկետը բաժնետոմսերի ամբողջ ծավալի բաժանորդագրության դեպքում Բանկը դադարեցնում է բաժանորդագրության գործընթացը:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ **ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**